ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 95

«27» 08 2020 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 46 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գևորգ Սուրենի Բաղդասարյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնում նշանակելու և Սևակ Ալֆրեդի Հովհաննիսյանին Կոտայքի մարզի դատախազի պաշտոնից փոխադրելու և Երևան քաղաքի դատախազի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 24.08.2020թ. N 262-Ա և 26.08.2020թ. N 266-Ա հրամանները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 22-րդ հոդվածի 2-րդ մասով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 26-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 9-ի N 22 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46 հրամանի 1-ին կետը լրացնել նոր պարբերությունով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հովհաննիսյան Սևակ Ալֆրեդի - Երևան քաղաքի դատախազ»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր

դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ